

ԽԵԹԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՇՆԱՇԽԱՐՅԻ  
ԵՐԿՐՆԵՐԸ Մ. Թ. Ա. XV ԴԱՐՈՒՄ

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

Վերջին տասնամյակներում Հայկական լեռնաշխարհի հնագույն քաղաքական կազմավորումների պատմության վերաբերյալ առկա գրավոր աղբյուրների ուսումնասիրությունները հնարավորություն ընձեռեցին վերանայելու վերջիններիս մեկնաբանության հետ կապված խնդիրները, որոնց ճնշման տակ արմատապես փոխվում են մի շարք առանցքային տեսակետներ։ Հոգվածի նպատակն է նորովի մեկնաբաննել Հայկական լեռնաշխարհի քաղաքական միավորների հետ Խեթական պետության կնքած ժամանակադրուեն ամենավաղ պայմանագիրը՝ «Պախիուվացի» Միտայի» տեքստը, որը առկա հայագիտական հետազոտություններում և ձեռնարկներում, նախկինում բնդունված և ավանդաբար կրկնվող հին թվագրման հետևանքով, զգալիորեն այլակերպել է Լեռնաշխարհի մ. թ. ա. XV-XIII դարերի քաղաքական զարգացման վերաբերյալ համրնգհանուր բնդունելություն դտած պատկերացումները։

«Միտայի տեքստը» պատկանում է խեթական այն արձանագրությունների թվին, որոնք միայն 1970-ական թվականներին են ստացել իրենց ճշգրիտ թվագրումը։ Բանն այն է, որ վերոհիշյալ տեքստերը կազմված են խեթական արքաներ թուղխալիյասի և նրա որդի Առնուվանգասի կողմից, որոնք սովորաբար նույնացվում էին մ. թ. ա. XIII դարի երկրորդ կեսին իշխած թուղխալիյաս IV-ի և նրա որդի Առնուվանգաս III-ի հետ։ Այս և մի շարք այլ արձանագրությունների<sup>1</sup> վերաթվադրման համար հիմք ծառայեցին ինչպես լեզվական, այնպես էլ գրանցում տեղ գտած պատմական իրադարձությունների մ. թ. ա. XIII դարում տեղագրելու անհնարինությունը։ Հ. Օտտենի<sup>2</sup>, Օ. Կարրուբայի<sup>3</sup>, Ֆ. Հոռովինքտեն Կատեի<sup>4</sup> և մյուս խեթագետների կողմից համոզիչ կերպով ցույց տրվեց, որ սրանք պիտի թվագրվեն մ. թ. ա. XV դարի երկրորդ կեսով – XIV դարի սկզբով, այսինքն, թուղխալիյաս II-ի և Առնուվանգաս I-ի ժամանակներով, այսպես կոչված «Միջին թաղավորության» եղրափակիչ շրջանով (Տելեպինուսից մինչև Սուպպիլուիումաս I)։ Միայն Ա. Կամմենհուբերը և իր աշակերտները (ի.

1 Օրինակ, «Խսմերիգայի պայմանագիրը» (KUB XXVI 41 + KUB XXIII 68), «Թուղխալիյասի ապրեգրությունները» (KUB XXIII 27; XXIII 11; XXIII 12; KBo XII 35; KUB XXIII 18), «Մադգուվատոսասի մեղանչանքը» (KUB XIV 1) և այլն։

2 H. O t t e n . Die Chronologie der hethitische Texte und die hethitische Geschichte der Grossreichszeit. – In: ZDMG, Suppl.I, Wiesbaden, 1969, S. 226 ff.

3 O. C a r r u b a. 1971a: 226ff.; 1973: 32ff.; 1971b; O. C a r r u b a. Beiträge zur mittelhethitischen Geschichte I-II. – Orientalia 18, 1977, S. 137ff.

4 P. H. H o u w i n k t e n C a t e. The Records of the Early Hittite Empire. Istanbul, 1970.

Վեգներ, Ս. Հայնհոլդ-Կրամեր և այլք)<sup>5</sup> հանգես եկան նոր թվագրման գեմ, սակայն այսօր մասնագիտական շրջաններում քննարկվող արձանագրությունների վերաթվագրումը կասկած չի հարուցում ե բնգունվում է առանց վերապահումների:

Վերոհիշյալ տեքստերի վերաթվագրումը ստիպեց լրջորեն վերանայելու մ.թ.ա. XV-XIII դարերի հեթական պետության քաղաքական պատմության մի շարք կարելորդույն հարցեր այդ թվում Հայկական լեռնաշխարհի հնագույն պետական կազմավորումների առնչությամբ:

«Միտայի տեքստի» և մի շարք այլ կարելոր պատմական բնույթի տեքստերի վերաթվագրումից զատ, վերջին մեկ և կես տասնամյակների ընթացքում զգալիորեն վերանայվեց նաև հեթական պետության պատմության ժամանակագրության խնդիրը: Սա առաջին հերթին պայմանավորված էր Հարեան երկու պետությունների՝ Ասորեստանի և Եգիպտոսի պատմության ժամանակագրության ճշգրտմամբ: Հ. Օտտենի, Գ. Վիլհելմի, Յ. Բյողեի, Վ. Հելքի, Ք. Քիթչենի, Թ. Բրայսի, Մ. Ասթուրի և այլոց հետազոտությունների շնորհիվ՝ էականորեն փոփոխվեց վերոհիշյալ երկրների և, բնականարար, նաև հեթական պետության պատմության ավանդական ժամանակագրական հենքը: Հայտնաբերվեցին հիմնավոր փաստեր երկու նոր արքաների՝ Տախուրվահիլի և Մուվատալիս II-ի գոյության օդտին: Այսպես կոչված «ստորին ժամանակագրության» համաձայն, մ.թ.ա. XV-XIV դարերի հեթական պետության արքայացանկը այժմ ներկայանում է այսպես\*.

Ցիդանտաս I (1500-1490)

Ամմունաս (1490-1470)

Խուցցիյաս I

Տելեպինուս

Տախուրվահիլիս

Ալլուվամնաս

Խանտիլիս II

5 A. Kammehuber. Konsequenzen aus neueren Datierungen hethitischer Texte: Pferdetrainungsanweisungen eine Erfindung der Hethiter. – Orientalia 38, 1969, S. 548 ff.; Die Vorgänger Suppiluliumas I. Untersuchungen zu einer neueren Geschichtsdarstellung H. Ottens. – Orientalia 39, fasc. 2, S. 278ff.; Die erste Computer-Analyse des Hethitischen-Münchener Studien zur Sprachwissenschaft, Bd. XXVIII, 1970, S. 51 ff. Նոր ժամանակագրությունը թերահավատորեն ընդունեց նաև Հնագետ Զ. Մալին (J. D. Mally. Hittites and Achaeans. Ahhiyawa Redomitus. – Historia XXIII, 1974, p. 139 ff.), սակայն նրա վերջին շրջանի աշխատություններում այս հարցը այլևս չի քննարկվում:

6 H. Ottene. Die hethitischen historischen Quellen und die altorientalische Chronologie. Mainz-Wiesbaden, 1968; J. Boese und G. Wieland. Aššur-dan I., Ninurta-apilekur und die mittelassyrische Chronologie. – WZKM, Bd. 71, 1979: S. 19 ff.; G. Wieland und J. Boese. Absolute Chronologie und die hethitische Geschichte des 15. und 14. Jahrhunderts v. Chr. – In: "High, Middle or Low?", 1987, S. 74ff.; W. Heinkel. Was kann die Ägyptologie wirklich zum Problem der absoluten Chronologie in der Bronzezeit beitragen? – In: "High, Middle or Low?", 1987, S. 18ff.; K. A. Kitchen. The Basics of Egyptian Chronology in Relation to the Bronze Age. – In: "High, Middle or Low?", 1987: pp. 37ff.; T. R. Bryce. Some Observations on the Chronology of Suppiluliumas's Reign. – AnSt 39, 1989, pp. 19 ff.; M. Astour. Hittite History and Absolute Chronology of the Bronze Age. Partille, 1989.

Ցիդանտաս II  
 Խուցցիյաս II  
 Մուվատալիս I  
 Թուղխալիյաս I (?)\*\*  
 Խաթթուսիլիս II (?)\*\*\*  
 Թուղխալիյաս II  
 Առնուվանդաս I  
 Թուղխալիյաս III  
 Առապիլուլիումաս I (1343-1322)  
 Մուրսիլիս II (1322/21 կամ 1318/17-1305)

\*Գրեթե բոլոր թվականները մոտավոր են:

\*\*Թուղխալիյաս I-ի գոյությունը կասկածի տակ է:

\*\*\*Խաթթուսիլիս II-ի գոյությունը կասկածի տակ է: Ըստ Հ.Օտտենի հիմնավոր փաստարկների<sup>7</sup>, այս արքային վերադրվող ձեռնարկումները իրականում պատկանել են մ.թ. ա. XVI դարի արքա Խաթթուսիլիս I-ին: Այս կարծիքին է նաև Մ. Ասթուրը<sup>8</sup>:

Ամմունասից հետո մինչև Թուղխալիյաս II կառավարած արքաների մեծ քանակը չի կարող վկայել ժամանակագրական զգալի ընդգրկման օգտին, քանի որ վերոհիշյալ արքաների մի մասը զոհ է գնացել պալատական դավագրություններին կամ գահընկեց է արքել (Խուցցիյաս I և II, Մուվատալիս I) և հազիվ թե երկար իշխած լիներ: Միաժամանակ, խեթական արքայացանկի արքաների կառավարման ժամանակագրության ճշգրտումը վկայում է այն մասին, որ «Միտայի» տեքստի հեղինակ Առնուվանդաս I-ը, ակնհայտորեն, սիմոն թվադրվի մ.թ. ա. XIV դարի սկզբներով կամ քիչ ավելի վաղ շրջանով:

Մինչև «Միտայի տեքստի» տվյալների պատմադիտական արժեվորմանն անցնելը համառոտակի ներկայացնենք Հայագիտական հրատարակություններում դրա կոնկրետ սլատմական ենթատեքստի հարցում առկա տեսակետները:

Ի. Մ. Դյակոնովը ենթադրում էր, որ մ.թ. ա. XIII դարի կեսերին վերինեփրատյան Հայաստ-Աղդին պիտի տրոհված լիներ իր նախկին բաղկացուցիչ մասերի, իսկ «Միտայի տեքստի» ժամանակներում Պախսուվան և Խոսւվան հանդիսացել են Խաթթից կախյալ երկրներ<sup>9</sup>: Վ. Խաչատրյանի

7 H. Ott e n. Die hethitischen historischen Quellen..., S. 110f.

8 M. Ast o u r. Hittite History, 39 ff.

9 И. М. Д յ я к о н о в. ПАН, с. 100; История Древнего Востока. М., 1988, с. 186 сл. Ի. Դյակոնովը ենթադրում է, որ Պախսուվայի և վերինեփրատյան մյուս երկրների կողմից Խաթթի դերիշիանության բնունումը, թերևս, պայմանագրված էր մ.թ. ա. XIII դարի երկրորդ կեսին այս տարածչընչանում տարեցարդի ուժեղացող ասորեստանյան սպառնալիքով: Բառացիորեն նույնը Հայ ժողովրդի պատմություն. Հ.1, Երևան, 1971, էջ. 201-202: Այս տեսակետը դեռ 1948թ. առաջ էր քաշել «Միտայի տեքստի» հրատարակչը (O. R. G u r t e y. Mita of Pahhuwa.- AAA, vol. 28, 1948, p. 46): Մասնագիտական գրականության մեջ Պախսուվան առաջմ հստակ տեղադրություն չունի: Առաջարկվել է այն որոնել մտափրապես Երզնկայից Հարավ (J. Garstang. The Location of Pahhuwa.- AAA, vol. 28, 1948, 48 ff.; J. Garstang and O. R. Gurtney. The Geography of the Hittite Empire. London, 1959, p. 35; F. C o r n e l i u s. Geschichte der Hethiter. Darmstadt, 1973, S. 273, 293 Anm. 11), եփրատի աջ ափին՝ Աղդից Հարավ (И. М. Д յ я -

կարծիքով, մ.թ.ա. XIII դարի վերջին քառորդում Հայաստան կրկին ընկել էր Խաթթիի գերիշխանության տակ: Սակայն շուտով Հայաստան, Խաթթիի հետ միասին զոհ է գնացել արևմուտքից Ներթափանցած թրակա-փոյութական ցեղերի հարձակմանը<sup>10</sup>: Իսկ ինչ վերաբերում է Հայկական լեռնաշխարհի արևմուտքում վկայված պետականությունների վաղ շրջանի պատմությանը, ապա Համբնդհանուր ընդունելություն է գտել այն տեսակետը, ըստ որի խեթերի արևելյան էքսպանսիայի պահին այստեղ արդեն առկա էր Հայաստան-Ազգի պետությունը՝ տարածաշրջանի գլխավոր քաղաքական ուժը<sup>11</sup>, որը Թուգիսալիյաս III-ի օրոք և հետագայում, ընդհուպ մինչև Սուպպիլուլիումաս Լ-ի և Հայաստայի արքա Խոկականայի միջև կնքված գաշնագիրը, գտնվել է Հակախեթական կոալիցիայի շարքերում:

Այսպիսով, «Միտայի տեքստի» թվագրումը մ.թ.ա. XIII դարի երկրորդ կեսով, Խեթական տերության տրոհումից շուրջ կես դար առաջ, ստիպում էր Ենթագրել, որ տվյալ պահին վերինեփրատյան տարածաշրջանը նույնպես ընթացել է վայրընթաց զարգացման ուղիով: Ի դեպ, այս տեսակետը Համահունչ է Խեթական տերության գերիշխանության կամ քաղաքական ազգեցության ոլորտում գտնվող մյուս ծայրամասային երկրներում վկայված նմանօրինակ երևույթների ընդհանուր համայնապատկերին<sup>12</sup>: Ամենակին չժխտելով այս Ենթագրության իրավացիությունը, քանի որ Խեթական տերության և Ասորեստանի անմիջական Հարեւանությամբ և դրանց հետ բազմապիսի քաղաքական, տնտեսական և մշակութային թելերով սերտորեն կապված Հայկական լեռնաշխարհի քաղաքական միավորներում դժվար է Ենթագրել զարգացումների այլ տրամաբանություն, այնուամենայնիվ Հարպի է նշել, որ «Միտայի տեքստի» վաղ թվագրումը որոշակիորեն փոխում է մ.թ.ա. XIII դարի և էլ ավելի հիմնավոր՝ մ.թ.ա. XV դարի անցքերի վերաբերյալ նախկին պատկերացումները:

Այժմ Ներկայացնենք «Միտայի տեքստում» հաղորդվող պատմական իրադարձությունները, որից հետո միայն գրանցից բխող պատմագիտական վերականգնումները:

Կօհօվ. ՊԱՀ, с. 84), Ներկայիս Դիվրիդի շրջանում (G. de l. Monte und J. Tischler. Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte. Wiesbaden, 1978, S.296). Վ.Խաչատրյանը Պախոնովան փնտրում է Բյուրակն լեռների արևմտյան հատվածում, որտեղ այսօր էլ Հայտնի է Պախ բնակավայրը (В. Н. Хачатрян. Восточные провинции Хеттской империи. Ереван, 1971, с. 116 ևլ. Նույնի Հայաստան մ.թ.ա. XV-VII դարերում. Երևան, 1998, էջ 36):

10 Վ. Խաչատրյան. Հայաստանը..., էջ 94:

11 E. F. Ո գ ե ր. Hajasa-Azzi. - Caucasica 9, 1931, S. 1f. Թուգիսալիյաս III-ի և նրա որդի Սուպպիլուլիումասի արշավանքին գեպի Ազգի նախորդել էր վերջինիս արքա Կարանիսի կողմից խեթահպատակ տարածքների զավթումը՝ ընդհուպ մինչև Սամուխա քաղաքը Եփրատի ափին (KBo VI 28, 11-12):

12 Մ.թ.ա. XIII դարի վերջին տասնամյակներում Առաջավոր Ասիայի երեք խոշոր պետությունների Եփրատով, Խեթական տերության և Ասորեստանի քաղաքական ազգեցության թուլացման և նախկինում կախյալ երկրների անջատողական քաղաքականության մասին տեսք. Վ. Քոսյան. Մ.թ.ա. XIII դարի մերձագործելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը. Երևան, 1999: Նույնի Ասորեստանը և Հայկական լեռնաշխարհը. մ.թ.ա. XIII դարի վերջին քառորդում. - ՊԲՀ, 1999/2-3, էջ 224-232:

Առաջարկություն չունի «Միտայի տեքստի» ամբողջական գիտական հրատարակությունը<sup>13</sup>: Թերես, պատճառն այն է, որ տեքստի մի զգալի հատվածը ընդհանրապես կորսված է, որը խոչընդոտում է գրալիարժեք բնկալմանը: Տեքստի քիչ թե շատ խոշոր պատճեններ նույնպես չկան, որոնք թույլ կտային վերականգնելու վնասված հատվածները: Առայժմ հայտնի են լոկ երկու փոքր բեկորներ, որոնց օգնությամբ վերականգնվում են միայն տեքստի երկու համեմատարար քիչ տուժած հատվածները<sup>14</sup>: «Միտայի տեքստի» որոշ հատվածների գրագարձումը, թարգմանությունը և հետազոտությունը գետեղված է խեթագետ Վ. Խաչատրյանի երկու մենագրություններում<sup>15</sup>: Տեքստում հիշատակվող անձնանունների և տեղանունների ուսումնասիրության ասպարեզում լուրջ ավանդ ունեն Գր. Ղափանցյանը, Գ. Զահուկյանը և Վ. Խաչատրյանը<sup>16</sup>:

Եվ այսպես, ինչ է իրենից ներկայացնում «Միտայի տեքստը»:

Ուսումնասիրողները իրավացիորեն նկատել են<sup>17</sup>, որ սույն պայմանագիրը ամրադրում է զերինեփրատյան տարածաշրջանում նախորդող փուլում հեթական պետության հարձակման հետևանքով ստեղծված հետեւյալ իրավիճակը. 1) խեթերի արշավանքն ավարտվել է տեղի երկրների հպատակեցմամբ դրանից բխող հետևանքներով (զերջիններիս կախյալ կարգավիճակի հաստատագրում), 2) դրան հաջորդել է զերինեփրատյան երկրների մի մասի՝ Պախիսուվայի և նրա դաշնակիցների ապստամբությունը (այն ուղեկցվել է խեթերի հանգեպ լոյալ իսուվայի վրա Պախիսուվայի արքա Միտայի հարձակմամբ), 3) հեթական արքան վերինեփրատյան երկրների հետ նոր պայմանագիր է կնքել, ըստ որի, Խաթթիի հանգեպ նախկինում վերցրած պարտավորություններից բացի առաջինների վրա Պախիսուվայի և մյուս անհնազանդ երկրների լոյալությունն ապահովելու լրացուցիչ պարտավորություն է դրվել: Արդի աերմինաբանությամբ, այս իրավիճակը կարելի է մոտավորապես բնութագրել որպես Համաձայնություն «տարածաշրջանային կոլեկտիվ անվտանգության» մասին: Դժբախտաբար, տեքստի մի շարք կարեոր հատվածների բեկորային վիճակը թույլ չի տալիս պարզելու այստեղ տիրող իրավիճակի որոշ էական մանրամասներ. օրինակ, ովքեր էին Միտայի գաշնակից երկրները, կամ ինչով է ա-

13 Տեքստի ինքնազդիը հրատարակվել է 1929թ. Ա.Գյողցեի կողմից (KUB XXIII 72): 1948թ. Օ. Գրբնին հրատարակեց գրա թարմանությունը (O. R. G u r g e n i, vol. 28, 1948, p. 32ff.):

14 1962թ. Հայտնաբերվեց տեքստի առաջին պատճեն-կցաբեկորը, որը հրատարակվեց 1976թ. Հ. Հովհաննեսի կողմից (H. A. Hoffner Jr. A Join in the Hittite Mita Text.—JCS 28, 1976, p. 60ff.): Մեկ այլ կցաբեկոր ինքնադրի տեսքով հրատարակվեց 1968թ. Հ. Կլենդելի կողմից որպես KUB XL 10:

15 В. Н. Ч а т р я н. Восточные провинции, с. 159 сл. (Obv. I 8-10, 29-31, 42-45, Obv. II 1-2, 16-19, 31-37). Հեղինակի վերջին ուսումնափոխան մեջ տրվում է տեքստի մի զգակի յասի թարգմանությունը՝ Համապատասխան պատմագիտական մեկնաբանություններով (Հայաստանը..., էջ 87-94):

16 Г р. К а п а н ц я н . Хайаса — колыбель армян. Ереван, 1947; Г. Б. Д ж а у к я н . Хайасский язык и его отношение к индоевропейским языкам. Ереван, 1964; Գ. Բ. Ջ ա ս ո ւ կ յ ա ն . Հ այոց լ ե զ վի պ ա տ մ ո ւ թ յ ո ւ ն . Ա մ ի ս պ ա յ ի ն շ ր ջ ա ն . Ե ր և ա ն , 1987, էջ 323-341; Վ. Ն. Խ ա չ յ ա ն . Հ այ ա ս տ ա ն ր . . . , էջ 34-46).

17 *Sht' u ðmənəf*. 9 k 15:

վարտվել խեթական արքայի ռազմական ձեռնարկումը ընդդեմ Պախսուշայի<sup>18</sup>: Այնուամենայնիվ, ընդհանուր գծերով տեքստի պատմագիտական արժեվորումը լուրջ տարածայնությունների տեղիք չի կարող տալ, թեկուղ հենց այն պատճառով, որ գիտությանը լավ հայտնի են նմանատիպ պայմանագրեր, կնքված խեթական արքաների և այլ նվաճված երկրների միջև, որոնց նյութերը ի վիճակի են տեքստաբանական համագրման միջոցով էականորեն լրացնելու ինքրո առարկա պայմանագրի կորսված հատվածները<sup>19</sup>: Մեր հետազոտության տեսանկյունից շատ ավելի կարեոր է «Միտայի տեքստի» կոնկրետ պատմական ետնախորքի խնդիրը, որը կփորձենք ներկայացնել ստորև:

Ինչպես նշվեց վերը, վերինեփրատյան տարածաշրջանի վերաբերյալ ամենավաղ քիչ թե շատ հավաստի սկզբնազբյուրը մ.թ.ա. XIII գարի կեսերին իշխած խեթական արքա Խաթթուսիլիս III-ի մասնագիտական շրջանակներին լավ հայտնի «Խնքնակենսագրությունն է», որտեղ տեղեկություններ են պարունակվում նախորդ արքաների գործունեության վերաբերյալ<sup>20</sup>: Մասնավորապես, այստեղ կարեոր է խեթերի երկու արևելյան հարեւան երկրների հետեւյալ Հրատակությունը<sup>21</sup>.

ՕԵՎ.

11) e-di-iz-ma <sup>U</sup>KUR <sup>URU</sup>Az-zi u-i[t nu KUR.KUR.M]ES UGU-TI hu-u-ma-an-da h[arg]a-nu-ut

12) nu-za <sup>URU</sup>Sa-mu-ha-an ZAG-an i-ya-a[t <sup>U</sup>KUR <sup>URU</sup>]I-su-wa-as-ma u-it [nu KUR <sup>UR</sup>]U Te-

ga-ra-ma har-ga-nu-ut

11) «Հեռվից Ազգի թշնամին եկավ և ողջ Վերին երկրները թալանեց,

12) և Սամուխա քաղաքը իր համար սահման դարձրեց: Իսուվայի [թշնամին] եկավ [և] Թեղարամա [երկիրը] թալանեց»:

Հաջորդ հիշատակությունը պահպանվել է խեթական արքա Մուրսիլիս II-ին սլատկանող տեքստերում, որտեղ նկարագրվում են նրա հոր՝ Սուպալիլուիլումաս I-ի և, ավելի նվազ չափով պապի՝ Թուդիալիյաս III-ի կառավարման շրջանի իրագարձությունները<sup>22</sup>: Զնայած վերոհիշյալ տեքստ

18 Վ. Խաչատրյանը գտնում է, որ պայմանագրի կնքման պահին Պախսուշայի հնագանդեցված չի եղել (Հայաստանը..., էջ 89-91): Զնայած տեքստի բեկորայնությանը, այնուամենայնիվ, թվում է, որ նման ենթագրությունը կասկածելի է: Այդ մասին տեքստը որևէ կոնկրետ տեղեկություն չի հաղործում:

19 «Միտայի տեքստի» համապարփակ ուսումնասիրության (գիտական տառադարձում, թարգմանություն, տեքստաբանական և պատմագիտական վերլուծություն) անհրաժեշտությունը առաջնահերթ խնդիր է Հայկական լեռնաշխարհի Հնագույն պատմության սկզբնաղբյուրների հետազոտության տեսանկյունից, որը և կկատարվի առաջիկայում տողերիս հեղինակի կողմից:

20 KBo VI 28. Այս տեքստի համապատասխան հատվածի գիտական տառադարձումը և թարգմանությունը բատ A. G. O e t z e Kizzuwatna and the Problem of Hittite Geography. New Haven, 1940, p. 21f.; գիտական տառադարձումը՝ B. H. X a c a t r o y n. Ակադեմիական թարգմանությունը և մեկնաբանությունը՝ Նույնի Հայաստանը..., էջ 53-55:

21 KBo VI 28.

22 Այս տեքստերի համահավաք գիտական հրատարակությունը՝ H. G. G u t e r - b o c k. The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Mursili II.—JCS X/2, 1956, pp. 41-68, X/3, pp. 75-98, X/4, pp. 107-129. Մուրսիլիսի պապի և հոր՝ Սուպալիլուիլումասի վաղ շրջանի դեպի արևելյան Փոքր Ասիր և Հայկական լեռնաշխարհի արևմուտք կազմակերպած

տերի մեծ մասը խիստ բեկորային է և դժվարամատչ, սակայն նույնիսկ դրանք թույլ են տալիս եզրակացնելու, որ վերիննեփրատյան երկրների և համթթիի փոխհարաբերությունները թուղթիալիյան III-ի և նրա որդու կառավարման շրջանում եղել են բավական լարգած։ Այս իրադարձությունները դուրս են մեր հետազոտության շրջանակներից<sup>23</sup>, ուստի, ելնելով «Միտայի տեքստի» ընձեռության հարավորություններից, անցնենք դրաքննարկմանը։

Այսպես, «Միտայի տեքստի» նոր թվագրությունը մ. թ. ա. XV դարի վերջին տասնամյակներով՝ Թուղթիւալիյաս II-Առնուկանդաս I փուլով այն դնում է վերջիններիս կառավարման ընթացքում Խաթթիի զդալի քանակությամբ զրավոր ազբյուրներով վկայված ակտիվ արտաքին քաղաքականության համատեքստում։ Այսօր, վերոհիշյալ Խեթական արքաների կառավարումը լուսաբանող տեքստերի տվյալների ճնշման տակ (այդ թվում նաև սույն Հոդվածի սկզբում նշված «Մադրուվաստասի մեղանչանքը» անվանումը կրող կարեորագույն տեքստը) վերականգնվում է Խեթական պետության սրընթաց ուազմաքազաքական վերելքի մի դարաշրջան, որը հիմնական գծերով կարելի է ներկայացնել հետեւյալ կերպ։

Առայժմ համապատասխան աղբյուրների սակագությունը թույլ չի տալիս վստահաբար զերականդնելու թուգիալիյաս Ա-ի կառավարմանը անմիջապես նախորդող ներքաղաքական իրադարձությունները։ Մասնադիտական հրատարակություններում կարծիք է հայտնվել, որ թուղխալիյասը կարող էր լինել նոր՝ ծաղումով խուրըհական դինաստիայի հիմնադիրը<sup>4</sup>. Համենայնդեպս, նրանից է սկսվում ինեթական հասարակության կյանքում խուրըհական մշակութային տարրերի շոշափելի մուտքը։ Միշտ շարք արքաներ և արքայական տոհմի անդամներ արձանադրություններում կրում են երկակի խեթական և խուրըհական անուններ<sup>5</sup>.

Թուղիսալիյաս Ա-ի ժամանակաշրջանի տեքստերը լի են արտաքին քաղաքական ձեռնարկումների մասին պատմող տեղեկություններոս։ Մասնավորապես, նրա տարեգրություններում հիշատակվում են արքայի երկու խոչըր արշավանքները՝ դեսլի արևմտյան Փոքր Ասիա։ Առաջինը ընդգեմ Արցավայի երկրների<sup>22</sup>, իսկ երկրորդը՝ Ասսուվա միության 22 երկրների, որոնց ընթացքում խեթերի, թեկուզ ժամանակավոր, դերիշխանության տակ ընկավ թերակղզու ողջ արևմուտքը՝ Լիկիայից մինչև Վիլուսա և Տարուիսա (Տրոալայում)՝<sup>23</sup>։ Թուղիսալիյաս Ա-ի ակտիվ արտաքին

արշավանքների մասին տե՛ս И. М. Дьяконов. ПАН, с. 90 և Վ. Ն. Խո-  
չառը յանձնաւուածքը... էլլ 50-55.

<sup>23</sup> Թռւղիալիյան III-ի կառավարման շրջանի իրադարձությունների մասին տե՛ս O. R. Gurney. The Hittites. Baltimore, 1966, p. 26–28; O. R. Gurney. Anatolia c. 1600–1380 B. C. – In: CAH, vol. XXVI, ch. XV(a), 1966, p. 23 ff.

<sup>24</sup> O. R. Gurney, The Hittites, p.26.

25 Ի դեպ, երկու արքաների թագուհիները կրում են միայն խուրրիական անուններ՝ Նիկալմատի և Ասմոնէնիկալ:

26 KUB XXIII 27.

27 Այս արշավանքի ընթացքի և առնչվող խնդիրների մասին տե՛ս O. R. G u r - n e y. — In: CAH, vol. XXVI, ch. XV(a), 1966, p. ff.; Ա. Ք ո ս յ ա ն. Խեթական տերություններ և Ախմիյական (Տրոյական պատերազմը). Երևան, 1997, էջ 16-18 (Նաեւ մասնագիտական կարծիքների տեսությունը); Վերջերս Թուգալիյասի կողմից վերը նշված տարածքների նվաճման մի նոր ապացույց ի Հայտ եկավ. Անկարայի հնագիտական թան-

քաղաքական ձեռնարկումներն ընդգրկում էին նաև թերակղզու հյուսիսը՝ կասկերի երկիրը<sup>28</sup>, հարավը՝ Կիցցուվատնան<sup>29</sup>, արևելքը և հարավ-արևելքը:

Մեր հետազոտության տեսանկյունից կարեոր է հատկապես խեթերի արտաքին քաղաքականության արևելյան ուղղությունը<sup>30</sup>, որտեղ հիշատակում է հսուվան, ուստի ստորև ներկայացնենք սույն արշավանքի մասին պատմող հատվածը<sup>31</sup>, որը տեքստում անմիջապես հաջորդում է կասկերի դեմ մղած պատերազմին: Այս տեքստը պատկանում է Թուղիաւիյաս II-ի «Տարեգրությունների» խմբին:

28) [nu LUGAL KUR <sup>URU</sup>I-su-wa ku-ru-ur] IS-BAT nu-us-si LUGAL <sup>URU</sup>Hur-ri

29) [an-da wa-ar-ri-es-se-es-ta? ..... u-uk-ga <sup>m</sup>Tu-ut-ha-li-ya-as LUGAL.GAL

I-NA KUR <sup>URU</sup>I-s]u-wa la-ah-hi-ya-u-wa-an-zí pa-a-u-un

30) [...] KUR <sup>URU</sup>I-šu-wa za-ah-hi-ya-ah-ha-at

31) [...] u-it nu-mu KUR-e EGIR-an

32) [...] ta-la-ah-hu-un na-as-ta GIM-an

33) [...]u-ga-as-ta sal-li KUR-e KUR <sup>URU</sup>I-su-wa

34) [...]x É<sup>TM</sup> ku-e-nu-un

28) [ԵՎ հսուվայի արքան .....թշնամության գնաց] և Խուրրիի արքային օգնության հասավ:

29) [Ես. Թուղիալիյասը] գնացի պատերազմի [գեպի] հսուվա:

30) [...] Ես արշավեցի դեպի հսուվա:

Քարանի պահաստներում հայտնաբերվեց մետաղի գավաթի վրա մինչ այդ չնկատված հիերոգլիֆային մակագրություն, որտեղ ասվում է հետեւյալը. «Երբ Թուղիալիյան նվաճեց Tarai-i-wa/i-za-wa/i-ն» (Newsletter for Anatolian Studies, 1995/2, p. 5):

28 KUB XXIII 36 + XXXI 35.

29 Այս երկրի հետ Թուղիալիյասի ունեցած հարաբերությունների մասին հիշատակվում է Սուպպիլիլիումաս I-ի և Կիցցուվատնայի արքա Սունասսուրայի պայմանագրում (KBo 1 5): Վերոհիշյալ պայմանագրի առնչությամբ համեմատաբար վերջերս ամերիկյան ինթագետն Ծ. Էթլը առաջարկեց մի հիմնավոր վարկած, ըստ որի այն կնքող ինթական արքան ոչ թե Սուպպիլուլիումաս I-ինն է, այլ Թուղիալիյաս II-ը (R. B. e a l. The History of Kizzuwatna and the Date of the Sunaßura Treaty. – Orientalia 55, 1986, fasc. 4, p. 432 ff.):

30 KUB XXIII 11 III; XXIII 16: Կիցցուվատնայում և ընդհանըլապես մերժավորույան գոտում Թուղիալիյաս II-Առողջանդաս I-ի ակտիվ գործունեության վառ վկայությունը այսպիս կոչված «Խոմերիդայի պայմանագիրն» է (KUB XXVI 41; KUB XXIII 68 + ABoT 58, Հրատարակությունը՝ A. K. e m p i n s k i ս u n d S. K o š a k. Der Ismerigavertrag. Die Welt des Orients, Bd.2, 1968, S. 191ff): Սա պայմանագիր է, կնքված Առողջանդաս I-ի և Կիցցուվատնայի մի շարք քաղաքներում ուղղմասութիկանական ֆունկցիաներով օժտված մի խումբ իսմերիդացիների միջն: Այստեղ հսուվում է այն մասին, որ վերջիններս իրավասու են սույն քաղաքներում ինթական արքայի անունից պատճեռություր կարգազներին, այդ թվում նաև՝ Կիցցուվատնայի ինթական կառավարչին (BÉL MADGALTI): Վերջինիս առկայությունն արդեն իսկ խեթերի ակտիվության լուրջ վկայություն է Թուղիալիյաս II-Առողջանդաս I-ի օրոք: Խոմերիդայի տեղադրությունը վերջնականապես ճշտված չէ: Այն, հավանաբար, գտնվել է Տավրոսի երկայնքով ինչ-որ մի հատվածում՝ Կիցցուվատնայից արևելք (G. de l. Monte ս u n d J. Tischler. Die Orts- und Gewässernamen, S.149; B. H. X a c a t r յ a n. Ակազ. սոչ., ս. 98 շլ.):

31 KUB XXIII 11 Rs. III. Տեղատի տուժած հատվածների վերականգնումը և թարգմանությունը ըստ O. Կարրուբայի (O. Carruba. Beiträge zur mittelhethitischen Geschichte I-II. - Orientalia XVIII, 1977, S. 162 f.):

- 31) [.....] նա եկավ: Եվ ինձ (Համար) [.....] երկիրը ետևից՝  
 32) [.....] ես թողեցի: Եվ երբ [.....]  
 33) [.....] Եվ ես [.....] (այդ) մեծ երկիրը՝ հսուվան  
 34) [.....] տունը ես ոչնչացրեցի:

Ակնհայտորեն, այս նույն իրադարձության մասին է Հաղորդում  
 Առնուվանդաս I-ի նշանակալիորեն գնասված մի տեքստ<sup>32</sup>:

- 1) na-at-kan A-NA <sup>m</sup>Sa-u[š-sa-tar?]
- 2) ne-e-an-ta-ti nu-u[s]
- 3) a-pí-el ŠA KUR <sup>URU</sup>Hur-[ri]
- 4) na-as-kan an-da I-NA [.....]
- 5) ERIN<sup>MES</sup> ANSU.KUR.RA<sup>MES</sup> SA [.....]
- 6) at-ta-as-mi-is IŠ-ME [.....]
- 7) an-da i-mi-ya-an-t[a-ti?]
- 8) na-as I-NA KUR <sup>URU</sup>I-su-wa [.....]
- 9) ŠA KUR <sup>URU</sup>A-as-su-wa-ma [.....]
- 10) u-da-as ERIN<sup>MES</sup>-az Ha-[at-ti?]
- 11) [.....]-ha-a-an-ti tu-[uz-zí-in?]

- 1) Եվ նա Սառւսատարին? [.....]
- 2) ուղարկեց ինձ: Եվ նա [.....]
- 3) որ Խուրրի երկրի [.....]
- 4) Եվ նա [.....]-ում [.....]
- 5) զորքը և մարտակառքերը, որոնք [.....]
- 6) խանդարեցին [.....]
- 7) իմ Հայրը լսեց [.....]
- 8) Եվ նա Խուրվա երկրում [.....]
- 9) իսկ Ասսուվա երկրի [.....]
- 10) նա ջարդեց: Խաթթիի զորքեց [.....]
- 11) [.....]? զորքը [.....]

Վերը հղված երկու աեքստերը վկայում են Թուղիսալիյաս II-ի կողմից վերինեփրատյան Խուրվայի նվաճման մասին, սակայն արդյոք այդ արշավանքին նախորդող փուլում սույն երկիրը դտնվել է Խաթթիի ազգեցությունից դուրս, թե ոչ, դժվար է ասել, քանի որ առայժմ այս խնդիրը լուսաբանող որևէ սկզբնաղբյուր գոյություն չունի:

Հայտնի է, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում (մ.թ.ա. XV դ. երկրորդ կես) Առաջավոր Ասիայում, Խաթթիից բացի, կարևորագույն քաղաքական ուժը Միտաննին էր: Միտաննիի ակտիվ արտաքին քաղաքականության սկիզբը դրել էր Պարաթթարնան՝ Ալալախի արքա Իդրիմիի, Կիցցուվատնայի արքա Պիլլիյայի և խեթական արքա Ցիդանտաս II-ի ժամանակակիցը (Թուղիսալիյասին Ցիդանտասից բաժանում են երկու արքաներ): Այսինքն, Պարաթթարնան պիտի Թութմոս III-ի ժամանակակիցը լի-

Ներ<sup>33</sup>: «Պարաթթարնայի օրոք Միտաննիի քաղաքական ազգեցությունը լուսաբանող տեղեկություն չի պահպանվել։ Հայտնի է միայն, որ նա Ալալիսի արքա Իդրիմիի կողմից կոչվում էր «Հզոր արքա» և օդնել է վերջինիս վերահաստատվելու իր հոր դաշին՝ Հաջորդ միտաննական արքան Պարսպատտարի որդի Սառսադատտարն է (տեքստերում նաև՝ Սառսաստար և Սառսատտար)։ Թուղիսալիյաս Ի-ի ժամանակակիցը։ Վերջինիս օրոք Միտաննիի ազգեցությունը տարածվել է Աշուրի և Ալալիսի վրա<sup>35</sup>։ Իսկ Հաջորդ արքա Արտաղամա Ի-ի մասին հայտնի է, որ նրա օրոք կնքվել է Հաշտության պայմանագիր Եգիպտոսի և Միտաննիի միջև, որն ամրապնդվել է փարավոն Թութմոս IV-ի (մ.թ.ա. 1400-1390 կամ 1392-1382թթ.) և միասննական արքայադստեր ամուսնությամբ։

Վերը բերված տեղեկությունները չեն վկայում Տավրոսից հյուսիս ընկած երկների նկատմամբ Միտաննիի ունեցած դերիշխանության առկայության մասին<sup>36</sup>, սակայն, միևնույն ժամանակ, չեն բացառում առաջինների միտաննամետ տրամադրությունները, կապված խեթական տիրապետության թոթափման ձգտումների հետ։ Թուղիսալիյաս Ի-ի իսուվական արշավանքի մասին պատմող վերը բերված վնասված տեքստերից (KUB XXIII 11; KUB XXIII 14) պիտի ենթադրել, որ իսուվան խեթերի կողմից նվաճվելու նախօրեին կարող էր լինել կամ համեմատաբար անկախ, կամ էլ խեթական աղդեցության ոլորտում։ Այդ մասին կարելի է դատել տեքստի այն հաղորդման հիման վրա, ըստ որի խեթական արքան իսուվա էր արշավել վերջինիս արքայի կողմից Միտաննիի արքա Սառսադատտարին օդնելու պատճառով։ Թերեւս, Թուղիսալիյասի ուսպական ձեռնարկումներն ընդդրկել են բուն միտաննական տարածքը, որը ստիճել է Արտադատտարին դաշնակիցներ որոնել հարևան քաղաքական միավորների շարքում։

Այսպիսով, Առնուվանդաս Լ-ի վերոհչյալ տեքստերի հիման վրա պարզ է դառնում, որ նրա հոր՝ Թուղիսալիյաս Ի-ի օրոք վերինեփրատյան իսուվան նվաճվել է խեթերի կողմից, որի առիթը Միտաննիի արքայի հետ

33 Թութմոս III-ը կառավարել է մ.թ.ա. 1479-1425 թթ. (K. A. Kitchener - In: "High, Middle or Low?", p. 52) կամ մ.թ.ա. 1467-1413 թթ. (W. Helck - In: "High, Middle or Low?", S. 26):

34 Գ. Մ. Ա Վ Ե Տ Ի Ը Ա Հ. Գոսудարство Միտաննի. Երևան, 1984, ս. 39.

35 Տամ же, ս. 40С. Հեղինակը Միտաննիի քաղաքական ազգեցության տակ դտնվող երկներ է դիտում նաև Փոքր Ասիայի արևելքում, Հարավ-արևելքում ընկած միշարք մանր քաղաքական միավորներ, ինչպես Ալզին, Խուրվան, Գուրստալիսասն, Արավաննան, Դուրմիտուն, Թեգարաման, Արմատաննան և այլք (նույն տեղում, էջ. 42-43)։ Սակայն Հօղուտ այդ ենթադրության, հզված երկու խեթական տեքստերը (E. Weidemann - Politische Dokumente aus Kleinasiens. Leipzig, 1923, I, 7) շարադրում են շատ ավելի ուշ շրջանի իրազարձություններ, այն է՝ Սուպպիլուլիումաս Ի-ի հոր՝ Թուղիսալիյաս Ի-ի կառավարման վերջերին խաթթիի գեմ սկսված մեծ ապստամբությունը։ Այսուեղ նշվում է նաև, որ Միտաննիի արքա Տուշրաթթան ընդունել է Սուպպիլուլիումաս Ի-ի հարձակումից Միտաննի փախածներին և ձեռնարկել արշավանք զեպի իսուվա։

36 «Սունասուրայի պայմանագրում» հիշատակվում է իսուվայի նկատմամբ խեթերի տարած հաղթանակի, իսուվացիների՝ «Խուրիթ երկիր» (այսինքն՝ Միտաննի) հետանալու և իսուվան խուրիների կողմից ժամանակավորապես նվաճվելու մասին (KBo I 5 8-29)։ Եթե, ինչպես նշվեց վերը, «Մունասսուրայի պայմանագիրը» կնքող խեթական արքան Թուղիսալիյաս Ի-ն է, այլ ոչ Սուպպիլուլիումաս Ի-ը, ապա հնարավոր կլինի պարդել «Միտայի տեքստի» նախօրեին Հայկական լեռնաշխարհի արևմտաքում խեթական պետության առաջնական պարագաներ լուսաբանող որոշ կարևոր մանրամասներ։

ունեցած դաշնակցային հարաբերություններն են եղել: Երկու տուժած տեքստերում էլ թուղխալիյասի գործունեության մասին պատմելիս Առնուվանդասը հիշատակում է իր մասնակցությունը Խոսովայի դեմ մղված ուղղմական գործողություններին: Նկատի առնելով Հոր և որդու մեկրնդմեջ հիշատակությունները, ակնհայտ է, որ խոսքը ոչ թե երկու տարբեր ժամանակահատվածներում տեղի ունեցած իրադարձությունների, այլ միենույն արշավանքի մասին է: Կարծում ենք, դժվար է կասկածի տակ առնել այն ենթադրությունը, որ «Միտայի տեքստում» պիտի հաջորդեր Առնուվանդասի վերոհիշյալ երկու տեքստերին, այսինքն, կազմված լիներ մի այսպիսի ժամանակաշրջանում, երբ.

1) Խոսովան, նվաճվելուց հետո, խեթերի կողմից համարվում էր լոյալ պետություն, որի նկատմամբ Պախիսուվայի թշնամական դործողությունը նրանք դիտում էին որպես իրենց շահերը ոտնահարող քայլ:

2) Վերինեփրատյան երկրների մեծ մասի լոյալությունը Խաթթիի հանգեց, որը պարզորոշ վկայված է «Միտայի տեքստում», հաստատագրված է եղել ավելի վաղ (թե որքան վաղ, դժվար է ասել) կողմերի միջև կնքված պայմանագրով: Այն պիտի արձանագրեր Խոսովայի նվաճմանը նախորդած ինչ-որ իրադարձություն:

Զուտ տեսականորեն, իհարկե, հնարավոր է, որ Խոսովան և վերինեփրատյան մյուս երկրները նվաճված լինեին երկու անգամ՝ «Միտայի տեքստից» ավելի վաղ, իսկ հետո, արդեն երկրորդ անգամ՝ Առնուվանդաս I-ի վերոհիշյալ տեքստերի կազմմանը անմիջապես նախորդող շրջանում, սակայն այս տարբերակը թվում է քիչ հավանական: Համենայնդեպս, առաջին տարբերակը ավելի լավ է հիմնավորված:

Եղրափակելով մեր հետազոտությունը, անհրաժեշտ ենք համարում առաջարկել Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածի երկրների և Խեթական պետության փոխարաբերություններին առնչվող խեթական սելվագիր տեքստերի հետևյալ հաջորդականությունը՝ ըստ խեթական արքաների (մ.թ.ա. XV դարի վերջ – XIV դարի առաջին տասնամյակներ):

1) Թուղխալիյաս II - Առնուվանդաս I (KUB XXIII 11 և 14) - Խոսովայի (և, հավանարար, «Միտայի տեքստում» հիշատակվող երկրների նվաճում), պայմանագրի կնքում:

2) Առնուվանդաս I (KUB XXIII 72) - Պախիսուվայի և նրա դաշնակիցների ապստամբություն, խեթական արքայի պատժիչ միջոցառումներ, պայմանագրի թարմացում:

3) Թուղխալիյաս III-ի արշավանքները դեպի վերինեփրատյան Աղդի և Հարեւան երկրներ:

Խեթական աղբյուրների վերոհիշյալ հաջորդականությունը ստիպում է կասկածի տակ առնել մասնագիտական հետազոտություններում և ձեռնարկներում արմատացած երկու տեսակետներ, որոնց մասին նշվեց Հողվածի սկզբում:

Առաջինը մ.թ.ա. XIII դարի երկրորդ կեսին Հայասա-Աղդի պետության տրոհումն է իր բաղկացուցիչ մասերի, որին մասնադեմները հանդել էին «Միտայի տեքստում» այս երկրանվան բացակայության փաստի հիման վրա: Այժմ պարզ է դառնում, որ նման եղրակացության համար

որևէ հիմք չկա: Ավելին, հաշվի առնելով մթ.ա. XIII դարի կեսերով թվագրվող և խեթական արքա Թուղխալիյաս IV-ի կողմից Խաթթիի սահմանային կառավարիչներին տրված հրահանգներում պահպանված տեղեկությունները, կարելի է ենթադրել, որ Հայասա-Ազգին սույն փուլում դեռևս գոյություն ուներ որպես այդպիսին, բնդ որում ակնհայտորեն խեթական անմիջական ազդեցությունից գուրա<sup>37</sup>: Հայասա-Ազգին կարող էր տրոհվել ավելի ուշ, մ.թ.ա. XIII դարի վերջերին կամ XII դարի առաջին կեսին, առաջավորասիական և էղեյան համբնդհանուր քաղաքական ճղնաժամի փուլում: Այս մասին, թերևս, կարելի է ենթադրել Հայասայի տարածքից դեպի Հարավ բնակչության լայն զանդվածների տեղաշարժի մասին վկայող հնագիտական և այլ բնույթի փաստարկները<sup>38</sup>:

Երկրորդը Խեթական պետության՝ դեպի արեելք ուղղված արշավանքների սկզբնական փուլում Հայասա-Ազգի պետության գոյության մասին ենթադրությունն է: Քանի որ «Միտայի տեքստի» կազմման պահին հիշատակվում է ավելի ուշ շրջանի աղբյուրների Հայասա-Ազգի քաղաք Դուկկաման որպես առանձին քաղաքական միավոր խեթերի հետ պայմանագիր կնքող բազմաթիվ այլ քաղաքների շարքում, ապա դժվար չէ ենթադրել, որ տվյալ պարագայում ավելի նպատակահարմար է խոսել մեծաքանակ ինքնուրույն պետական կազմավորումների մասին («քաղաք-պետություն»): Գուցե ժամանակավրեալ կլիներ Հայտարարել, թե «Միտայի տեքստը» պիտի դիտել որպես վերինեփրատյան դոտում առկա մանր քաղաքական միավորների խոշորացման նախօրյակ, մի դորձրնթաց, որը, անկասկած, կարող էր զգալիորեն խեթական սպառնալիքի պայմաններում և որը իր ավարտին հասավ քիչ ավելի ուշ՝ Թուղխալիյաս III-ի կառավարման շրջանում, երբ այստեղ հանգես է գալիս Հայասան:

Եվ, վերջապես, երրորդ եղբակացությունը, որ բխում է Թուղխալիյաս III-ի և Առնուվանդաս I-ի վերը հղված երկու տեքստերից (KUB XXIII 11 և 14), վերինեփրատյան հսուվայի միտաննամետ դիրքորոշումն է «Միտայի» տեքստի ժամանակաշրջանում: Հավանաբար, հսուվայի արքայի օժանդակությունը Խուրրիին (Միտաննի) պիտի ինչ-որ կերպ կապված լիներ «Իսմերիգայի պայմանագրին» նախորդած խեթա-միտաննական բախման հետ: Սկզբնաղբյուրների սակավությունը առաջմ թույլ չի տալիս մանրամասնելու այս իրագարձությունները, սակայն մի բան պարզ է, որ այդ պայքարն ավարտվել է խեթերի՝ թեկուղ ժամանակավոր հաջողությամբ, ինչը արձանագրված է «Իսմերիգայի պայմանագրում»<sup>39</sup>: Ավելի ուշ, արդեն Թուղխալիյաս III-ի օրոք, Հայտնի է, որ Խեթական պետությունը ստիպված էր տեսական պայքար մղել բոլոր կողմերից Հարձակվող հակառակորդների դեմ, այդ թվում՝ հսուվայի (տես վերը՝ KB 6 VI 28):

<sup>37</sup> Թուղխալիյասի այդ տեքստը վաղուց հայտնի էր մասնագետներին, սակայն ինչպես Հարկն է չի իմաստավորվել: Աչա այն. «Տերերդ, ովքեր առաջին հերթին(?) կառավարում եք Ազգին, Կասկային (և) Լուկկային նայող սահմանային կետերը» (KUB XXVI 12 II 12-15):

<sup>38</sup> Այս տեսակետի մասին տե՛ս Ա. Ք. ու յան. Էթնիկական տեղաշարժերը Փոքր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում.՝ ՊԲՀ, 1991/1, էջ 77: Ն ույնի Մ. թ.ա. XII դարի մերձավորակելյան ճշածամբ, էջ 165-167:

<sup>39</sup> Տե՛ս ծանոթ. 30 և 36:

## ՀԱՄԱՊՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԹԲՀ – «Պատմա-բանասիրական հանդես» (Երևան).  
 AAA – Annals of Archaeology and Anthropology (Liverpool).  
 ABoT – Ankara (Ankara).  
 AnSt – Anatolian Studies (London).  
 JCS – Journal of Cuneiform Studies (New Haven).  
 KBo – Keilschrifttexte aus Boghazkoi (Leipzig und Berlin).  
 KUB – Keilschrifturkunden aus Boghazkoi (Berlin).  
 WZKM – Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes (Wien).  
 ZDMG – Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft (Wiesbaden).

ХЕТТСКОЕ ЦАРСТВО И СТРАНЫ АРМЯНСКОГО НАГОРЬЯ  
В XV в. до н. э.

*ԱՐԱՄ ԿՕԾՅԻՆ*

Р е з ю м е

В статье рассматривается хорошо известный в научной литературе клинописный хеттский текст под названием "Мита из Паххувы". Уже с 1970-х годов этот текст был передатирован второй половиной XV в. до н.э., временем хеттского царя Арнувандаса I (по старой датировке – конец XIIIв. до н. э. – Арнувандас IV). Новая датировка текста требует соответствующей корректировки политической истории стран долины Верхнего Евфрата. В арменоведческой литературе закрепилось мнение о том, что ко времени составления "Миты из Паххувы" ведущая политическая сила региона – Хайаса-Аззи уже была раздроблена на составные части, так как в тексте некоторые города Хайасы упоминаются как самостоятельные единицы. Передатировка текста дает возможность для представления следующей точки зрения.

1. В период правления хеттских царей Тудхалияса II и его сына Арнувандаса I страны долины Верхнего Евфрата были аннексированы хеттами; два хеттских текста упоминают о захвате Исувы. К этому моменту большое количество мелких политических единиц было вынуждено принять хеттское владычество, что было оформлено вассальным договором. Через некоторое время после заключения договора правитель Паххувы Мита и его союзники отказались от своих вассальных обязательств и совершили враждебные действия против соседней Исувы, Дуккамы и др. Текст "Миты из Паххувы" представляет собой новый договор между Хеттским царством и странами долины Верхнего Евфрата, заключенный после подавления мятежа.

2. Под светом данных текста "Миты из Паххувы" должно быть отвергнуто укоренившееся в специальной литературе мнение о том, что в XIII в. до н.э. Хайаса-Аззи была раздроблена на свои составные части. Это государство продолжало существовать еще при хеттском царе Тудхалиясе IV (вторая половина XIII в. до н.э.). Единственное упоминание Хайаса-Аззи в хеттских текстах

данного периода свидетельствует о том, что она, вполне вероятно, находилась вне сферы прямого политического контроля Хеттской империи.

## THE HITTITE KINGDOM AND THE COUNTRIES OF THE ARMENIAN HIGHLAND IN THE 15th CENTURY B. C.

ARAM KOSYAN

### S u m m a r y

The paper deals with the well-known cuneiform Hittite treaty - "Mita of Pahhuwa". Since until 1970s this important text was dated back to the second half of the 15th century B.C., thus ascribed to the Hittite king Arnuwandas I (against the old dating back to the reign of the king Arnuwandas IV - late XIII century B.C.). The new dating of the text demands corresponding revision of the political history of the Upper Euphrates countries. In Armenological literature it is generally accepted that to the time of the "Mita text" compilation the leading political entity of the region - Hayasa-Azzi had suffered a disintegration, since some of its cities are listed in the treaty as separate political units. The high dating of the treaty should be taken as an important argument in favor of the next view.

1) During the reign of the Hittite kings Tudhaliyas II and his son Arnuwandas I the Upper Euphrates countries were annexed by the Hittite kingdom, two Hittite texts mentioned the capture of Isuwa. By that time a great number of small political units of that area were forced to accept the Hittite suzerainty, which was legalized through a vassal treaty. Some after this treaty Mita of Pahhuwa and his allies refused to perform their vassal duties and began hostilities against neighbouring Isuwa, Dukkama etc. The "Mita text" represents a new treaty between the Hittite kingdom and the Upper Euphrates countries which followed the submission of the rebels.

2) The current view dealing with disintegration of Hayasa-Azzi in the 13th century B.C. is a theory to be rejected under the light of the "Mita text". Hayasa-Azzi was still active during the reign of the Hittite king Tudhaliyas IV (second half of the 13th century B.C.). The only reference to this country in the Hittite texts shows that by that time, in all probability, it was beyond the sphere of direct Hittite domination.